

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 38

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական նշաններ	• • • • •	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Անմահութիւն (Գերբուած Լամարդինի:—	• •	
Գրաբար քարզմ.)	• •	ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ
Դարձեալ բարոյական առողջաբանութիւն	• •	ՏՈՔԹ. ԱԼԼԱՀՎԵՐՏԻՆՈՐԴԻ
Անգլիացին ու իր տունը	• • • • •	ՀՐԱՆՏ Տ ՆԱԶԱՐԵԱՆ
Ձանձրալի հարկ մը	• • • • •	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Տխրունք: — Խմբագրական Նօթեր: — Միջազգային արձագանգ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Զրանք կամ 5 բուլլի: Թղթաստանի ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ նրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռ-Քէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաբույս

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զխաւար ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղմամբիւ անհոգեկէտ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լաւ ընտրութիւն մը ընել: Այդ անհոգեկէտն ոմանք նշանաւոր են իբրեւ թափառահամ եւ քաղցրաբոյր, ոմանք ալ թէեւ նոյնքան թափառելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կեղ դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, անհոգեկէտ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ հոտ եւ մանաւանդ կեղ, դուրիչ եւ զօրացուցիչ անզուգական, ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի քէյը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Նավթուեան եւ Իսազուլեան քէյի մեծ վաճառատունը, իր բաղմամբիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս ամբողջ մեծաքանակ ներածած է ճաբոնեակեան զուտ թէյ մասնաւոր եւ դակակեան առփերով ու կը հրաւիրէ օգտուիլ այս առիթէն բոլոր տնայն, որ կը փափաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատուն մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճապոնի ամեալաւ անհոգեկէտ թէյեր:

3—10

Ուսադուրիւն մարգայի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւ-տաբուն (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ հմտութեամբ ստացած է, կը ծանուցանէ յորդոյ յաճախորդներուն թէ բնականորէ փոխադրած է Պէքեար փաղոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթաներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեսի եւ ուտերու ագեղ եւ ակամայ շալտումները եւ դաշտանի դաղորումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ Կրիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւ այլն: Կիրակիներէն զտա ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրաթ օրերը ձրիաբար կը դաւանէ վկայեալ աղքատները: 3—10



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենա մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղառկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն տալի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՐԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝ |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՏԱՐ | | Չարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կատարելաբաւարարութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը։

Հիւանդութեանց դէմ ապահով է ելծէ իր մէջը չիգանուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ)

(Ժողովար, պրօնշիտ, հազ, հարբուխ և բարակցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոյլ (սրբաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է. Լճաջին անգամ անուներով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Լճեն տարի հաղարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և ժարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Միշտ վտան սյս պահկերով վարդապոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու փայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

26

Բոլոր բեռնորոշները և բեռնաշահները կը ծախեն:

ՅՈՒՇԱՏԵՏՐԳՐՊԱՆԻ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Որ միեւնոյն ասեմ բուրբեղն, հայեղն, գաղղիեղն եւ յունաւէն լեզուներով Օրացոյց ըլլալէ զաս գործի մարդոց համար կարգ մը կարեւոր ծանօթութիւններ կը պարունակէ:

Դին Պարզ կազմ 3 դրուշ. — Ընտիր յարակազմ 5 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգոծ 8 դրուշ

Յ. Մասթէոսեան տունը այս օգտակար հրատարակութեան գտած լաւ ընդունելութենէն գոհ. այս օտար մոյնին աւելի ընդարձակն ալ հրատարակած է՝ այսինքն իւրաքանչիւր էջը մէկ օրուան յատկացուած:

Դին Պարզ կազմ 5½ դրուշ. — Ընտիր յարակազմ 8 դրուշ. — Կաշեկազմ ոսկեգոծ 12 դրուշ:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐ մեծ դիրքով. սեղանի համար, մոյնպէս չորս լեզուաւ, կարեւոր ծանօթութիւններով եւ հաւուհետումարի ձեւով գծուած, տկուն անգղիական լարակազմ գին 7 դրուշ:

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթալանառանցք, Թիւ 27, Ֆինանանդար, Կ. ՊՈԼԻՍ.

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառներու բոլոր թղթալանառներու եւ գրավահառներու իով:

ԱՄԱՆԻ

54^ր ՏԱՐԻ, 2. ՇՐՁԱՆ

ԹԻՒ 38

24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Եթէ քառորդ դար կամ աւելի հեռաւոր ժամանակ մը ետքը՝ հետաքրքրուողներ գտնուին, թէ յամի Տեառն 1905 մեր բանասէրները գրական կամ լեզուական ինչ լուրջ հարցով կը հետաքրքրուէին ու կ'ըզբաղէին, պիտի տեսնեն թէ ուսուցիչը, վարդապետը, փաստաբանը, — ու քիչ կը մնայ որ կրնեն ալ խառնուին վէճին, — սիւնակներ կը լեցնեն ու քերականական փաստերու ահաքին մթերք մը կը նետեն եղեր մէջտեղ՝ Այտնեանին կամ ուրիշ քերականներու կըրթնած՝ զիրար համոզելու համար թէ «չի գնաց» զրելու է «չգնաց»ի տեղ, «չի կերաւ» «չկերաւ»ի տեղ կամ փոխադարձաբար, 2—2ր 2րի յաւիտենական խնդիրը նոր. չէ սակայն, ասկէ քսան տարի առաջ ալ կը վիճաբանէին անոր վրայ, և հաւանական է որ, — տխուր գուշակութիւն, — ապագայ սերունդին մէջ հասնին արժանաւոր յաջորդներ այս բծախնդիր լեզուաբաններուն ու բանավէճը չաբունակեն միւսոյն ուղղագրական նիւթին շուրջը, առանց դարձեալ համաձայնելու միօրինակ ձեւի մը վրայ: Եւ մենք, ոչ-քերականադէտ գրողներս, ու շատ մը գրասէր ընթերցողներ, որ ութսունական թուականներէն ի վեր կամայ ակամայ կը հետեինք այս վէճին, որ տարին քանի մը անգամ ծայր կուտայ՝ չես գիտեր ուսկի՞ց և ինչպէ՞ս, դեռ չկրցա՞նք բացորոշ կարծիք մը կազմել թէ որո՞ւն պայտպանածն է ճիշդը, ուղիղը, որո՞ւն պէտք է հետեւիլ վերջնապէս: Ու կը շարունակենք, ամէն մէկս, մեր ճաշակին և ըմբռնումին համեմատ գործածել «չի»ն կամ «չը»ն, միշտ սխալած ըլլալու կամ չըլլալու երկբայութեան մէջ:

Կարելի չէ՞ր արդեօք՝ հեղինակութիւն ունեցող քանի մը ձեռնհասներու թողուլ որ մէկ անգամէն որոշեն ուղղագրական այդ փոքրիկ, — չըսելու համար անպէտ, — խնդիրը, փոխանակ այսքան էջեր ու փաստեր սպառելու որոնց զոհուած մտքի յոգնութիւնը ու ժամանակը լաւագոյն կերպով կրնային նուիրուիլ գրական գեղեցիկ արտադրութեանց կամ աւելի՛ շահեկան ու պիտանի վիճաբանութեանց, նորէն բանասիրական սահմանին մէջ: Խնդիրը աշխարհաբարի վերաբերելուն, կըսպասէինք որ ինքզինքնին «աշխարհաբարի վարպետ կամ ուսուցիչ» հռչակողները կարենային իրենք գէթ ըսել վճռական բան մը, — վասն զի՝ յորմէհետէ աշխարհաբարի քերականութիւն մը ունեցանք, անոր ծաւալումը և սպառումը ապահովելու համար հարկ եղաւ որ աշխարհաբարի վարժապետ ալ ունենանք, և անոր յատուկ chaire մը, ուսուցչական աթոռ մը՝ կեդրոնական վարժարանէն սկսելով: Այդ պաշտօնը ու տիտղոսը ստեղծուեցան շատոնց ի վեր, դասախօսութիւնները շարունակուեցան, չըջանաւարտներ ելան որոնց վկայականին վրայ «պատուոյ յիշատակութիւն» նախագրուեցաւ աշխարհաբարի ու աշխարհիկ գրականութեան ճիւղին համար, — բայց տակաւին չի կրցաւ լուծուիլ աշխարհաբար քերականութեան ստատորական խնդիրը, թէ «չի տեսա՞յ» պէտք է գրել թէ «չտեսայ», «չը գիտե՞մ» թէ «չգիտեմ»:

Եւ հաւանական է որ, վերջ ի վերջոյ, հեղինակաւոր վճիռը գրաբարագէտներուն մնայ՝ ի հեծուկս աշխարհաբարագէտներուն:

— Ինչո՞ւ անցեալ չարթու «Բուրաստան» չունէիք Մասիսին մէջ, կը գրէ մեզ դեպքը օրոցական պատանի մը :

Այս հարցումը իրեն հասակակից ուրիշ պարոններու միտքէն ալ անցած ըլլալու է : Զենք մեղադրեալ զիրենք՝ իրենց այս հետաքրքրութեանը համար որ բնական է մեծ ու պզտիկ ամէն գրողի որ կուզէ՝ հրատարակուած տեսնել իր արձակը կամ ոտանաւորը և կամ անոր մասին յիշատակութիւն մը, նոյն իսկ գիտողութիւն : Սկսնակները, նոր գրիչ փորձողները, երիտասարդներէն ու տարեցիներէն աւելի կ'ունենան այս մարմաջը, — վասն զի, մի՛ կարծէք թէ «նորերը» ըսելով 16—18 տարեկանները միայն կը մըռնենք, քառասունոց մարդիկ կան, որոնք տարին քանի մը ոտանաւոր կը տեղացունեն զանազան խմբագրութեանց, միշտ կը մերժուին ու նորէն կը փորձեն : Այս տեսակ պատկառելի նմոյշներ ամէնէն աւելի Իզմիրէն կը հասնին, ուր կերեւայ թէ հինցած, մոռցուած, ծերանալու մօտ դասատուներու ցանցառ խումբ մը կայ, որոնք չեն վարանիր կենսագրութիւննին ալ կցել իրենց ոտանաւորին, ինքզինքնին լաւապէս ներկայացնելու և յանձնարարելու համար : Դժբաղդաբար, չի յաջողած բանաստեղծութիւն մը՝ չի յաջողած բանաստեղծութիւն կը մնայ միշտ, ամէն ճիգերու հակառակ, ինչպէս անարուեստ նկար մը ընդունելութիւն չի գտներ ոսկեզօծուած շրջանակով մըն ալ :

Դալով մեր փոքրիկ պարոններուն, անոնք սխալ ըմբռնած ըլլալ կերեւան «Բուրաստան»ին նպատակը : Իրենցմէ քիչ շատ հակում ու կարողութիւն ունեցողներուն քանի մը խրախուսական խօսքեր, և շատ շատ երկուս—երեք ոտանաւորի հրատարակումը բաւական կը համարինք սկիզբները. ատկէ աւելիին պէտք չէ որ յաւակնին. այնուհետեւ թո՛ղ շարունակեն իրենք իրենց գրել, սրբագրել, խնամել ոճերնին, զարգացնել գաղափարնին, ու քիչ մը ատեն անցնել վերջը միայն նոր հրատարակութեան մը փափագ յայտնել, որ չի մերժուիր. բայց ամէն շաբաթու, իրարու ետեւէ, ոտանաւորնին տպուած

տեսնել ուզելը՝ պահանջկոտութիւն մը կամ շատ եռանդուն փափագ մըն է որուն գոհացում չի կրնալ տալերնուս՝ թո՛ղ չի նեղանան իրենց դիւրաբորբոք երեսկայութեանը մէջ :

Սրդէն կը տեսնեն որ նեղացողներ շատ ունինք շուրջերնիս, օրուան գրողներուն մէջէն, այս կամ այն պատրուակով, վարդապետ, վարժապետ, քրոնիկագիր, որոնց մով զբաղելու հազիւ կը հասնինք. եւ եթէ աղուամազ բանաստեղծներն ալ նեղանալու ելլեն, — որոնց հետ չպիտի ուղէինք բնաւ վիճաբանիլ՝ է՛ն փափուկ ձեւովն անգամ, — անհաշտութեանց շարք մը պիտի ըլլար մեր գրական-լրագրական գործը :

Եւ եթէ սա քանի մը շաբաթներուս մէջ այնպէս եղաւ, մե՛րն է մեղքը : Գրասէր. ու բարեգործ անձնաւորութեան մը ի պատիւ քանի մը տող բան գրեցինք՝ անոր դէմ ուղղուած անճա՛հ եւ անճաշակ հեգնանքներու առթիւ, եւ անա՛ լուտանքները մեղի դէմ ուղղուեցան ու կը շարունակուին դեռ, զրամական տեսակէտներ առաջ քաշելով ու կրկնուելով շարունակ, իբր թէ ատոնք գրողները ու հրատարակող խմբագիրները ճգնաւորի ճաշակներ ունին, մանանայով կը սնանին, նիւթականին ի՛նչ ըլլալը չեն գիտեր եւ դրամի երես տեսնելնուն՝ կը չիկնին, կը գայթակղին ու հեռո՛ւ կը փախչին : Ո՛վ միամիտ ու բարի հրապարակագիրներդ Իզմիրի, որոնց համար հարկ պիտի ըլլայ օրին մէկը սանդձել «անարծաթ խմբագիր» բացատրութիւնը՝ «անարծաթասէր» ի մաստով՝ ինչպէս հինները ունէին «անարծաթ բժիշկ» աւանդական խօսքը : Զեղմէ մէկն ալ, դեռ վերջերս, կենսագրական ուրուսագիծ մը նուիրելու առթիւ՝ կը գրէր Մասիսի խմբագրին համար թէ Պոլսոյ տպարանի մը հաշուետու մարին պահանջքի կողմը բազմապատկութեան փորձեր կատարել տուեր է, որ մեր լեզուով կը թարգմանուի թէ տպարանի մը տպարք ունեցեր է : Ի՛նչ ալ աղւոր գիւտ և ի՛նչ նրբութեամբ մէջտեղ նետուած : Կը տեսնէք որ Մասիսի մէջ կ'ար-

տատպեմ այս գրածնիդ, մէկդի թողով միւս փաղաքուշ տողերը որով հաճած էիք «գըրադէտի ու հրապարակագրի շնորհ եւ ձկուն ու թիւրաթեք լեզու մը» եւ այլն վերագրել ինձ, որուն համար շնորհակալութիւն յայտնելու յարմարագոյն առիթ մը չէի կրնար գտնել: Բայց «տպարանի հաշիւ» կ'ըսէինք ու անոր առջև կանգ պիտի առնեմ, ո'չ թէ զձեզ հերքելու համար, այլ հարցնելու համար որ, եթէ Պ. Հրանտ Մամուրեան իր բարեյիշատակ հօրմէն ժառանգած չլլար թերթ մը և տպարան մը ու մամուլ մը՝ իրենց ամէն կազմածներով, ու հարկադրուէր վարձքով տպարանի մը մէջ տպագրել տալ իր շաբաթաթերթը, չէր կրնար պատահիլ որ հաշուենթաց մը ունենար, կամ Պոլոոյ մէջ չիկայ հրատարակիչ կամ խմբագիր որ տպարանի մը հետ գործ ունենալով՝ հաշիւ ալ ունենայ: Երբէն ի վեր է որ անհատի մը նիւթական կացութիւնը կուգայ կը խառնուի իր մտաւորականին հետ, ձեզի պէս փափկանկատ գրողներու կամ թղթակիցներու ձեռքը առիթ մը ըլլալու համար տս ու ան խայթելու:

Բայց վստահ եղիք որ ձեր այդ յայտնութիւններովը չէք ալլայեր ու չէք վշտացներ բնաւ ձեր ենթական որ եթէ զձեզ չի ճանչնար՝ գոնէ հեռուէն լսած է զձեզ հիւրընկալող անօրէն—խմբագրին ու իր աշխատակիցներէն ոմանց անշահախնդրութիւնը, բարի համբաւը և նիւթականէ խորշումնին:

Բայց կ'արժէ՞ միթէ ասկէ աւելի զբաղիլ այս լրագրական վէճերով ու խնդիրներով: Կեանքը այնքան կարճ է ու ժամանակը այնքան սուղ: Երէկուան փայլուն արուեստագէտը, փնտռուած գրագէտը, այսօր կը տեսնես գործունէութենէ՝ ու հրապարակէ քաշուած յանկարծ. արկած մը, դժբաղդութիւն մը, հիւանդութիւն կամ անգործութիւն, զգեստնած են զինքը. և կարեկցական ձեռք կը կարկառես անոր, մոռնալով գըրչամարտը զոր կուեննայի անոր հետ՝ դեռ երէկ՝ յաջողութեան ու առողջութեան օրերուն: Որքան ատեն որ գոյութիւն ունին

այս տխուր անակնկալները, հրապարակային ինչպէս անհատական կեանքի մէջ, պայքարն ու բանավէճը պէտք է սահման մը ունենան: Ու տարուան մէջ քանի մը անգամներ կիմանանք անոնցմէ: Երբեմն ուսուցիչ մըն է, երբեմն գրչի վաստակաւոր մը, ու այս անգամ ալ բեմական մը: Գուշակեցիք անշուշտ թէ Չափրաստճեանին ակնարկել կուզենք: Դաստիարակ մը որ «ժապաւինեալ տոմար»ի կամ հանգանակութեան Կոնդակի կարօտ կըլլայ, իր ճակատագրային տարրին մէջ է արդէն. բայց դերասան մը, կատակերգակ դերասան մը մանաւանդ:

Տխուր իրողութիւնը այս է սակայն, և որչափ ալ որ Մասիսի այս էջը յատկացուած ըլլայ «Գրական Նշմարներ»ու, հոն մեր բաժինը կը նուիրենք նաև Գիղարուեստականին ալ: Եւ ինչ տխուր բաժին:

Յուրտ իրականութիւնը սա է. Միքայէլ Չափրաստճեան, վաղեմի դերասանը, որ այնքան տարիներ ծիծաղ առթած է հանրութեան, այսօր լալագին վիճակի մը մէջ կը գտնուի՝ իր բաղմանդամ ընտանիքով: Չաւկըներուն անդրանիկը հաղիւ պատանի մըն է, ու հիւանդագին վիճակի մէջ: Պատրիարք Սրբազանը հաճած է նուիրահաւաքութեան Կոնդակ մը շնորհել այս փորձ և բաղմավաստակ դերասանին որուն դուռը ափ առած է անօթութիւնը: Նպաստները պէտք է յանձնուին Սկիւտարի Աղքատախնային, ինչպէս ծանուցին օրաթերթերը, Չափրաստճեանի ու ընտանիքին հասցուելու համար:

Սրտագին կերպով մեր ընթերցողներուն ալ կարեկից ուշադրութեւնը կը հրաւիրենք բաղմավաստակ դերասանին վրայ, որ բեմական աշխատակիցը եղած է ատենօք, ողբացեալ Ադամեանին և մեր այն բոլոր նշանաւոր արուեստագէտներուն որոնցմէ չատեր մեռած են այսօր: Ադամեանը օտար հիւանդանոցի մէջ մեռաւ: Չափրաստճեանը գէթ միսթարութիւնը կուեննայ իր աղքատիկ բընակարանին մէջ դարմանուելու, իր բաղմակարօտ ընտանիքին մէջ: Բայց դարմանէ աւելի՝ սնունդի կը կարօտին, այս ցուրտ—ձմեռ օրերուն, ուր թշուառութիւնը աւելի՝ կծու եւ աւելի՝ զգալի կ'ըլլայ:

ԱՆՍԱՆՈՒԹԵՐՆ

Արեգակսն կենաց մերոց անդէն ընդ ելսն հատանին գոյնք,
 Յորմէ հաղիւ թէ տակաւին ի թալկացեալ ճակատս մեր
 Անկանին փարատիչք մըթոյ նըշոյլք ինչ դողդոջունք,
 Աճեն ըստուերք, մեռանի տիւ, որ կանս յաչաց չիք լինին,
 Ինձ քաւ լիցի թէ սըրտարեկ և սըրտառուչ ընդ այս տեսիլ՝
 Շըրտուցեալ կասեցից առ եղերք խոր վըհին մահու,
 Եւ կամ ոչ իսկ ի հեռուստ առանց դողման ունիցիմ ժոյժ,
 Տըրտում երգոց նընջեցելոց, որոց ելցէ արդ ձայն գուժի,
 Կամ յոգւոցն հանելոյ եղբօր ուրուք կամ սիրելոյ՝
 Որ բակ առեալ զօրհասական մահճօք հեղձեալ մղձկիցին,
 Կամ հեծութեանց պըղընձոյն, որ խուճապեալ և խըռովեալ՝
 Առնիցէ աղդ թէ պակասեաց թըշուառ ոք մարդ ի մարդկանէ:
 Ո՛վ մահ, ողջոյն ընդ քեզ, ո՛վ երկնառաքդ հասեալ փըրկիչ,
 Ոչ նըշմարեմ ես իքեզ զայն կերպարանս դըմէնութեան՝
 Զոր ըզք և արկին յերկար ան և կարծիք մըտաց մուրաք.
 Ոչ երկաթ եղծագործ զինեալ վառէ ըզձեռն քո,
 Ոչ նենգաւոր աչք են քո, և ոչ անխնամ անգութ երեսք.
 Արգահատող ոք Աստուած ըզքեզ ի դիւր յըղէ վըշտաց.
 Ոչ եղծեալ ապականեա, այլ մատուցեալ ի փըրկութիւն՝
 Հրեշտա՛կ երկնից, բարձեալ բերես աստուածական ջահ ի ձեռին:
 Յորժամ աչք իմ վաստակեալք մերձ ի փակել իցեն առ լոյս՝
 Կաս ըզբըք իմովք հեղուլ դու սըրբագոյն լուսոյ նըշոյլս,
 Առնիթեր կացեալ Յուսոյ, որ մըտախոհ ի հող մահուն,
 Յեց ի Հաւատս՝ ինձ ցուցանէ զա՛յլ իմն աշխարհ չըքնաղագոյն:
 Եկ լուծանել աղէ զիս ի յօդապատ մարմնոյս կապից,
 Թուլացո կաշկանդելոյս, մատո՛ ինձ այսր ըզթեքս քո.
 Զի՛ յամիցես, երեւեցո զերեսըս քո, զի ուր ուրեմն
 Առ անծանօթ սըլացայց էն, որ սկիզբն է իմ և կատարած.
 Ո՛վ զիս խըլեաց յիմմէ բընէն, ո՛վ իսկ իցեմ, և յի՛նչ ծընեալ.
 Մեռանիմ, չե ծանուցեալ թէ զի՛նչ ծնանելն իցէ բընաւ:
 Դու հոգիդ, հիւր երկնաւոր, ում ես ընդ վայր առնեմ հարցփորձ,
 Բո՛ր երկինըս բնակէիր մինչչե քո զիս չընչաւորեալ.
 Ը՛ր ըզքեզ զօրութիւն ընկէց ի դունտս յայս դիւրարեկ,
 Ո՛ր ձեռն ըզքեզ կապեալ կալաւ ի կաւեղէն արգելանիդ.
 Ե՛ր ծածուկ մըտերմութիւն, յո՛ր մեծասքանչ զօդս համբարից
 Հոգի՛նդ մարմնոյ՝ ըզմիմեանց այդպէս եղեալ իցէք վակժոյժ.
 Ո՛ր իցէ օրն՝ յորում հոգի ըղնիւթն ի բաց ընկենուցու.
 Թողեալ զերկիր՝ դու յո՛ր արդեօք չըլեալ գնայցես նոր օթեան,
 Բեզ մոռացօ՞նք աստիճս եղեն, և անդըր ևս քան զգերեզման
 Ի նորո՛ւմ իմիք արդեօք գընաս ծնանել մոռացութեան,
 Եւ անդ ըսկիզբն առնել կենաց՝ որ նման իցէ մօտաւորիս.
 Թէ ի ծոց անդր էին, որ բուն և ակն է քում գոյին,

Զերծ իսպառ յամենայնէ որ քակտելիքն իցեն կապանք՝
 Դիմեալ գնայցեա ժառանգել ըզմըշտընջեան քո իրաւունս :
 Այդ աւաղիկ է յոյս իմ, այո, հատո՛րդ ոգւոյ իմոյ ,
 Դովի՛ն սիրտ իմ զօրացեալ , ի սքանչելի քոյին երեսս
 Դիտեաց անխէթ ըզթառամել զուարթածաղիկ գունոց դարնան ,
 Դովի՛ն զիս, մինչ օրհասին նետիւ ի մահ հարկանիցիմ ,
 Տեսցես ժրպտեալ , դեռ յառոյգ տիս , ի հանել անդ թափել օգւոցս ,
 Եւ արտասուք խընդութեան , ի հրաժարել մեր ի միմեանց ,
 Փայլեսցեն յա՛ջս իմ, մինչ դու յիս ըզնուադն յետին հայեսցիս :
 «Զո՛ւր յոյս» առցէ աղաղակել առ այս նախիրն Եպիկուրեան ,
 Եւ որ մատամբք իւրեանց մանր ըզընութեան քըրքրեալ ծածուկս՝
 Ի խորկան ուրեք ուղղոյն՝ ստայժմու ոճոյս նըկարելոյ
 Մըտաւոր զնիւթն իմն դընեն , իսկ ըզհոգի՝ անկեաց անգործ .
 «Ի՛յ անմիտ, ասացեն բայ , որ տարապարտ մեծամըտեսդ՝
 Հայեա՛ց ըզքեւ , է՛ է սկիզբն և կատարած ամենայնի ,
 Բնաւք ի վախճան իմն ընթանան , և ծընանին բնաւք առ ի մահ .
 Թալանան ահա ծաղիկք ի դեղնացեալ մարգագետնիդ ,
 Եւ որ ի փայտս անտառի կանգնէր ճակատ սէգ եղեւին՝
 Այժմ ընդ բեռամբ ամաց ընկճեալ խառն ընդ խըռիւս անկեալ դընի .
 Սարսափին ահա ծովուց յատակք առ ջուրց պակասելոյ ,
 Եւ առ սակաւ սակաւ երկնից իսկ դէմք ի գոյն դառնան դալկան .
 Արեգալն , զոյր յաւիտեանք թաքուցին զժամ արարածոյն ,
 Եւ նա ինքնին՝ մեզ հանգունակ՝ ձըգի երթալ ի քայքայումն ,
 Եւ եկեցէ օր՝ յորում մարդ ի տագնապի և ի կարւոյ՝
 Զա՛յն խնդրեսցէ ընդ անապատս երկնից , և ո՛չ տեսցէ ուրեք :
 Տես զիա՛րդ շուրջանակի յերեւելիսս առհասարակ
 Փոյի զփոշուով դէզադէզ բերեալ կուտեն դարք հոլովեալք ,
 Եւ ժամանակ ի մի քայլ զամբարտաւան միտսըդ ձաղեալ՝
 Որոց ծընօղ ինքն եկաց , ինքն և դադաղք նոցա լինի ,
 Եւ միայն մարդ , մարդ միայն , ո՛վ վերագոյն զառանցութիւն ,
 Հասանել կարծէ նորոց կենաց ի գուր գերեզմանի ,
 Եւ հուսկ յետոյ յոյինչ անդր ի մըրըրկաց բըռնավարեալ ,
 Յամաց կենացն եղեալ նըկուէ , երազի զկեանսն յաւիտենից» :
 Այլո՛ց թողցի , իմաստունքդ երկրի , տալ ձեզ պատասխանի ,
 Թո՛ղ իցեմ ի սըխալանս , սիրեմ , պիտոյ է ինձ յուսալ :
 Ի տագնապ տարակուսի վըրդովին միտք մեր ապիկար ,
 Այլ ի մըտաց իսկ լըռել խօսին ի մեզ աղդմունք բնականք :
 Արդ յորժամ տեսանիցեմ զի ընդ անհուն պարզութեամբ երկնից
 Դուռտք ի կըլիռ ընթացից իւրեանց անկեալ ըստ արտուղի
 Եւ ընդհարեալք ընդ միմեանս՝ յայսկոյս յայնկոյս խուճապականք
 Վազըս վազս առնուցուն , և ծագք երկնից զարհուրիցին .
 Յորժամ լըւայց ըզհնութիւն խորտակելոյ գընտոյս երկրի ,
 Որ մեկուսի յայլոց գընտոց՝ յածեալ կոծեալ տատանիցի ,
 Եւ սուգ առեալ դառնապէս ընդ սաստկաջինջ կորուստ մարդոյ՝
 Ի գիշեր յաւիտենից ընկըղձ՝ յի հեռակորոյս ,

Եւ յորժամ ես, այսց ողորմ տեսեանց յետինս ականատես
 Պաշարեալ պատեալ մահուք և խաւարաւն անդընդակա՛ն,
 Թէ ես միայն կայցեմ յոտին, ե՛ս լոկ ընդ հենգըն արհաւրացս
 Ի քեզ եղէց ապաստան, ո՛վ Բարութիւնդ անլիրպական,
 Եւ յուսալից հաւատով մնացեալ այգոյն յաւիտենից՝
 Յաւերածս տիեզերաց դեռ ակըն քեզ կալայց ի տոկ:
 Բազում անգամ, որպէս յիշեսդ, յերանալից յայնժմ վայրի
 Ուր ծնաւ սէր մեր անմահ նայեցածով միով աչաց,
 Մերթ ի ծագըս հինաւուրց ապառաժուտ բարձուանդակաց,
 Եւ մերթ ի լուռ տըրտմական լըճաց ափունս ամայութեան,
 Յաշխարհական աղմըկաց ի բաց սրացեալք ըղձիւք սըրտի
 Թեւամուխ լինէաք ընդ քեզ ի մութն երեկորոյ:
 Ըստուերք իջեալք ի լերանց ի տարածածս երկայնածիգս՝
 Ըսքողեալս յաչաց մերոց վայրիկ մի զդաշտըս ծածկէին,
 Այլ անդէն խորհրդական լուսաւորացըն գիշերոյ
 Դասաղաս երեւալ հանդարտագոյն լուռլուռ ճեմօք,
 Եւ կըրկին լըրջացուցեալ զըստուերամած տեսիլս իրաց՝
 Զամենայն համակէին կողմանս անօսըր նըրողիւքն:
 Որպէս ի սուրբ տաճարի, յոր ի տըւէ ծագէ արեւ,
 Թէ առ երեկըս տակաւ նըւաղեսցեն ճաճանչք լուսոյն,
 Կանթեղըն ցայգանոց հեղեալ գիւրեւ լոյս երկիւղած՝
 Սուղ և խուն խաղաղական շողիւք լընու ըզվայրըն սուրբ:
 Ի հիացման լեալ քո յայնժամ, զաչս իմ տարեալ բերէիր անդ
 Յերկրականացս յերկինս ի վեր, և ի յերկնից այսր ի խոնարհ.
 Ասէիր «Աստուած ծածկեալ, քո՛ իսկ տաճար են համակերտք,
 Բզբեղ միտք մեր տեսանեն յո՛ր կոյս և զաչըս յառուցումք,
 Յաննիաղ քոց զօրութեանց, ոյց խելամուտ ցանկամք լինել,
 Հատեալ ճաճանչ է աշխարհ, և հայելի, և կերպարան.
 Գեղ՝ ժըպիտ քոց երեսաց, և հայեցուած աչացդ է տիւ,
 Սիրտ ընդհանուր ըզբեղ պաշտէ, ընդ բնաւ ըզբեղ շնչէ հոգի.
 Անչափ բարի, ամենակար, անհուն, առանց անցանելոյ,
 Վերադիրքս այս մեծամեծք ոչ տան զանուն քո՝ ստարժանի,
 Եւ ընկճեալ խոնարհեալ միտք ընդ բարձրական քով է ութեամբ՝
 Ի լըռութեան իսկ իւրում ըզմեծութիւն քո հըռչակէ,
 Եւ ընդ վայր թէպէտ հարեալ, սակայն առ քեզ Աստուած իմ Տէր,
 Ըստ արդաւորըն պայմանի իւրում ձըգտի ի վեր վեր,
 Եւ հասու լեալ զի ինքեան սէր է միայն կէտ վախճանի,
 Անժոյժ ի սէր քո վառեալ, ցանկայ լինել տիրածանօթ»:
 Այս քո բանք. և իղձքըս մեր թըռչէին կից միահառաչ
 Առ անծանօթ էն՝ զոր սիրտք մեր առնէին հաւատարիմ.
 Ի ծունր իջեալք իւր առաջի, զինքն յարարածս իւր պաշտէաք,
 Եւ զմեծարանս մեր առ նա տանէին այգ և երեկոյ,
 Եւ աչք մեր սըխրացեալք նըկատէին մի՛ ստմիոյէ
 Զերկիր՝ ուր կամքըս տարագիր, և զօթեան նորա՝ զերկինս:
 Ո՛հ, թէ ի ժամս անդ յետինս յորըս հոգի մերձ ի փախուստ՝
 Զվիրազ լանջսըն պատառել և առ Աստուած ցանկայ թըռչել,
 Հայեցուածոցըս մերոց լըւեալ էին յերկնից բարձանց՝
 Հարկանէր, զերկոսին ըզմեղ նեաիւըն փըրկութեան,
 Հոգիք մեր ի մի վաղ ի բունն իւրեանց ամպալըւեալ:

Զբաղում գընտովք աշխարհաց ի թռիչս իւրեանց անցանէին,
եւ սիրոյն թեօք սլացեալ ի միասին ընդ վայրս անհուն,
ի բարձունս համբառնային ի նմանութիւն ճառագայթից.
Եւ մինչ առ էն իսկ հասեալք սիրտ ի բերան, ի ծոց նորին
Ոգեխառնեալք ընդ միմեանս անքակութեամբ կըցորդէին:
Միթէ պատիր իղձք մեր էին, կամ թէ արդեօք ի չեութիւն
Հաստեցան էք՝ իբրեւ յայն իմըն հրաւիրեալք յառաջագոյն.
Եւ կամ իցէ՝ թէ հոգի բազորդ եղեալ մարմնոյն բախտի՝
Ընկըղմեսցի՝ ի խաւար խորխորատի գերեզմանաց.

Դարձցի՝ յերբ և ի փոյի, թէ ի թռանել կազմ և պատրաստ՝
Հանգոյն ձայնի պակասելոյ մաշեալ ընդ օղբս ցընդեացի:
Յետ ունայն ինչ հեծութեան, յետ ողջունի յետին չընչոյս
Չիցէ՝ ոք յարոց երբեմն ըղքեզըն սիրէին:
Ո՛հ, զայդըմ մեծ խորհրդոյ դու քեզ ինքեան հարցլիր, էլ վի՛ր,
Տես ըզմահ սիրելոյ քոյ, և տուր առ իս պատասխանի:

ԼԱՄԱՐԻԻՆ

Թարգմ. ի գալիսկանե
ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

ԴԱՐՁԵԱԼ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մասիսի մէջ հրատարակուած վերջին
յօդուածներէս մէկին մէջ ըսած էի թէ՝
մարդկային ինչպէս մարմինը, այնպէս ալ
միտքը մասնաւորապէս կրթութեան, զար-
գացումի, ուսման, վերջապէս աշխատու-
թեան կը կարօտին և ասոր համար զանազան
ազգերու սովորութիւնները սերտել, անոնց
բնաւորութիւնները նկատի առնել, կենդա-
նինքու կեանքը ուսումնասիրել, օրուան
գիտական կամ առողջաբանական գիրքերուն
հետեւիլ կը բաւէր: Զի, ինչպէս յայտնի է՝
այսպիսի օգտակար և միանգամայն հետա-
քրքրական գիրքերու ընթերցումէ վերջ
միտքերու յօգնութիւնը անհետ կ'ըլլայ մա-
սամբ կամ ամբողջովին և սրտերու ամէն
տեսակ նեղութիւնները (ոչ—գործարանական
անշուշտ) կը փարատին: Մինչդեռ, կարգ
մը եւրոպական կեղծ ու պատիր, չինծու,
սիրոյ վրայ կամ լկտի վէպերու և նկարազ-
րութիւններու ընթերցումը կը յօգնեցնեն
թէ՝ մարդուս մարմինը և թէ՝ ուղեղը:

Ի՞նչ բարոյական օգուտ կրնանք քաղել
մենք, ա՛յդ մեր բարքերուն, մեր սոցմային
կեանքին, մե՛ր ապրելակերպին՝ բոլորովին

հակառակ վիպասանութիւններէն. ո՛չ ապա-
քէն այդպէսով իմացականութիւննիս կ'ա-
պականենք, մարմիննիս, առողջութիւննիս կը
խանգարենք, վատուծ կը դարձնենք. ասոնք
չեն միթէ վախճանը. հակառակը պնդողը
պարզապէս իր միամտութիւնը, տգիտու-
թիւնը, իմացական կարողութեան պակա-
սութիւնը և տաղտկութիւնը կը մասնանշէ
և ոչ այլ ինչ:

Ասկէ ութը—տասը տարի առաջ երբ
մասնաւոր վարժարանի մը մէջ դիչերօթիկ
էի, վիպամոլ ընկեր մը ունէի. ամէն վէպ
կը կարդար. որ ատեն որ գրպանը խառնէիր
Զօլաի կամ Ժօրժ Օնէի նոր հրատարակ-
ուած հատորներէն հատ մը պիտի գտնուէր.
սակայն անմիջապէս ըսեմ որ, այդ տղան ոչ
իր դասերուն կը հասնէր, և ոչ ալ դպրոցա-
կան պարտականութիւնները կը կատարէր.
Խելքը միտքը վէպերուն տուած էր, կը կար-
դար կը լինցնէր, նորէն կըսկսէր և այսպէս
չարունակաբար: Չերկարեմ, այդ տղան օր
մը դպրոցէն վռնտուեցաւ և երկու երեք
տարի վերջը մտագարութենէն ինքզինքը
վիրաւորեց, և ա՛յնպիսի սաստիկ կերպով
մը որ քիչ ատենէն մեռաւ: Աւասիկ օրինակ
մը վիպամոլութեան տխուր բարքերէն որ
ըսածս կ'ապացուցանէ:

Բայց քիչ մնաց մոռնայինք մեր այս անս

գամուտն ասիւիք բացատրութիւնները բարեկամիս ուղղեալ, որ անցեալները տեսակցութեան մը միջոցին հասկցնել կը ջանար որ, թէ և ինք ալ հակառակ է վէպերու և սակայն գիտական վէպերը, ինչպէս ժիւլ—Վէրնի, Էտկար—Բօի, Ուէլսընի, Տոքթ. Բոնըն—Տոյլէնի վէպերը շատ ախորժելի են և օգտակար, ու աւելցնելով ըսաւ որ, եթէ այսօր քիչ շատ տարրաբանական, բնագիտական, աշխարհագրական, աստղագիտական, կենդանաբանական և այլ ծանօթութիւններ ունի, այդ հեղինակներուն կը պարտի միայն:

Իրա՛ւ է թէ ժիւլ—Վէրն գիտութենէ քաղած է իր նկարագրած սարսաղադեցիկ տեսարանները և սակայն բոլոր անոնք հարեալնցի են, ըստ որում ֆիզիքական տեսակէտը միայն նկատողութեան առած է, առանց մտահոգ ըլլալու կենսական խնդիրներու որոնք գիտութեան հետ ուղղակի առնջութիւն ունին: Ժիւլ—Վէրն, ինչպէս ժամանակին անոր մահուանը առթիւ Անգլիացի քննադատներն ալ գրեցին, կը խուսափէր նկատի առնել իսկապէս մարդկային տեսակէտը որով ա՛յնքան կը հետաքրքրուին թէ՛ այրերը և թէ՛ կիները:

Տղաքը, դպրոցական ընթերցողները մանաւանդ, ոչ Ուէլսընէ կ'ախորժին ոչ ալ ժիւլ—Վէրնէ. զի չեն հետաքրքրուիր պարունակած կէս—գիտական կնճռոտ ծանօթութիւններովը: Ժիւլ—Վէրնի վէպերը օգտակար են իրենց գիտական բացատրութեանցը համար, կ'ընդունիմ այս պարագան. և սակայն առանց երկարելու աւելցնեմ որ մարդ ո՛րքան ալ քիչ չահագրգռուի գիտութեամբ, աւելի լաւ է ըսել իսկ գիտական գիրքեր կամ պարբերականներ կարդալ քան թէ գիտական վէպեր:

Ժիւլ—Վէրնի վէպերուն օրը օրին հետեւած մէկէ աւելի բարեկամներ ունիմ, որոնք իրաւ է թէ քիչ շատ բաղձալողմանի գիտական հմտութիւն ստացած են և սակայն յերիւրանքը, առասպելը մեծ դեր կը կատարեն իրենց խօսուողութիւններուն մէջ:

Եթէ առասպելը կամ յերիւրանքը նախա-

մեծար կը սեպենք, ապահովապէս գիտութիւնը չէ որ մեզ պիտի չեղեցնէ այդ շաւղէն: Կարծեցեալ գիտական վէպերն ալ նոյնքան երեւակայական պատմութիւններ են որքան վէպերու յերիւրածոյ դէպքերը:

Հասկցուեցաւ կարծեմ նպատակս, աղնիւ բարեկամ, ուստի չերկարեմ, այլ իբրեւ եղբակացութիւն՝ անգամ մըն ալ կրկնեմ սա՛ պարագան թէ, փոխանակ մեր խելքը, միտքը, ուշադրութիւնը վէպերու վրայ դարձնելու, Բնութեան մեզի պարզեւած հրաշալիքներուն վրայ դարձնենք, կարդանք օգտակար գիրքեր, գիտական հմտալից հրատարակութիւնները. զի այսպէսով է որ մարդ իր բարոյական առողջութիւնը ապահովուեցած կ'ըլլայ, մտային անդորրութեան և մարմնական հանգստաւէտութեան համար պէտք եղածը ինքզինքէն հոգացած ըլլալով արդէն:

ՏՕԲԹ. Տ. ԱՆՆԱՆՎԵՐՏԻ ՈՐՈՒ

Ծ. Խ. — Մինչև հոն՝ ուր մեր բժիշկ—աշխատակիցը լկտի վէպերու դէմ կը խօսի, ըսելիք մը չունինք իրեն, և կատարելապէս իր իրաւունքին մէջ է: Իսկ ժիւլ—Վէրնի, Էտկար—Բօի, Ուէլսընի, Տոքթ. Բոնըն Տօյլէնի գործերը, — որոնցմէ ոմանք կը զարդարեն մեր օրաթերթերուն թերթօնի բաժինը, — քննադատելու ելած պահուն, քիչ մը չափազանցութեան կը տանի քննադատելու եռանդը: Վէպ մը նախևառաջ կը կարդացուի իր հետաքրքրական դրուագներուն համար, և երբ այդ դրուագները չեն պարունակեր կնոյական սիրաբորքը տեսարաններ ու ախտավարակ նկարագրութիւններ, ու միմիայն գիտական ու երկրախուզական նորութիւններու շուրջը կը յածին և դէպի անծանօթ հորիզոններ կատարուած ուղեւորութեանց մէջ կը սահմանափակուին, այդ վայրկեանէն ամէն կարգի ընթերցողներու մատչելի կը դառնան, միշտ բան մը սորվեցնելով ու բան մը ծանօթացնելով: Այս կարգի վէպերու թարգմանիչներն ու հրատարակիչները բնաւի՛ն մեղադրելի չեն: Առանց ընթերցողներուն մէջ եթէ կան այն

պիսիւնք, որոնք գիտութեան այս կամ այն ճիւղին սիրահար են, թո՛ղ հետեւին անոր, ո՞վ կ'արգելէ զիրենք: Իսկ գիտական ուղեւորական վէպերը ամէնէն պարզ ընթերցողին իսկ հմտութեան ու ծանօթութեան պաշար մը տալու հանգամանքն ունին, որուն համար անիրաւութիւն պիտի ըլլար մեղադրել անոնց տարածիչները, — հեղինակ, թարգմանիչ ու հրատարակիչ:

ՁԱՆՁՐԱԼԻ ՀԱՐԿ ՄԸ

— — —

Պատասխանելու ձանձրալի հարկ մը կըստեղծէ մեզ համար Բարգէն վրդ.՝ կնճռոտելով և տարտղնելով խնդիրը զոր յարուցած էր Լոյսի մէջ և որուն վրայ մեր բոլոր ըսելիքը գրած լինցուցած էինք «Ձախողութեան» յօդուածով զոր արտատպելու պատիւն ըրած էր Մանգուսիէի Էմիլ Ժոզֆ վրդական օրաթերթը՝ լրագրական պատմութեան տեսակէտով կարեւորութիւն մը ընծայելով անոր: «Լուսաթերթ»ին, — ինչ ալ տիրացուական բառ, — խմբագիրը՝ այս անգամ՝ մոռնալով իր գրողի ու եկեղեցականի կրկնակ հանգամանքները որոնք բարեկրթութիւն կը պահանջեն ամէն բանէ առաջ, սա տեսակ բառեր ու բացատրութիւններ կը գործածէ մեր հասցէին. — «գրախօսութիւններու շարքով մը աղտոտած էք Մասիսը» — «անլուր անամօթութեամբ կը յանդգնիք խեղաթիւրել իրողութիւնը» — «ձեր ըրած խօսքերը շանթաժ» են պարզապէս» — «չէք ամչնար» — և այլն: Այս բառերը կընդօրինակենք, դադափար մը տալու համար Բարգէն վրդ.ը չի ճանչցողներուն, թէ ինչ է իր վիճաբանելու եղանակը: Եթէ քիչ մըն ալ զայրանար, պիտի հայհոյէր. ու չպիտի զարմանայինք:

Եւ սակայն, բոլոր այս կեղտոտ բացատրութիւնները գործածելով հանդերձ, իրողութիւնը ո՛չ միայն կը թողու հոն՝ ուր որ էր, այլ աւելի՛ կը հաստատէ նախապէս յայտարարածնիս, զիւրով թէ երեք ամսուան համաձայնութիւնը փորձ մըն էր, և

թէ այնուհետեւ ա՛լ չէ ուղեր եղեր մեր քովը գալ: Զէ ուղած, այո՛, որովհետեւ չէ համարձակած, ու ճիշդ ասոր համար է որ կը խոստովանի թէ, Մասիսի համար գրած ու մեր չի հրատարակած «Խաչը» վերանագրով մէկ յօդուածը Բիւրակնի մէջ հրատարակելու է... «չատ ետքը»: Ինչո՞ւ չատ ետքը և ո՛չ անմիջապէս. միթէ օրը օրին չէ՞ր կրնար դիմել Բիւրակնին կամ ուրիշ որ և է թերթի, որոնք ատեն մը սիրայօժար կը հիւրընկալէին իր գրուածքները, և ո՛չ միայն հրատարակել տալ «Խաչը» այլ և հրապարակել մեր համաձայնութեան խղումը, ձախողութեան, փոխանակ չորս տարի սպասելու: Պատճառը յայտնի է. այդ միջոցին, իր հաշուական ծանօթ խնդիրը կտր լրագրական հրապարակի վրայ և երես չունէր խմբագրութեանց դիմելու, գիտնալով որ պիտի ճամբուի:

Բարգէն վրդ. հնարամտութիւնը կունենայ, իր պատասխանին մէջ չի չօղափել այս կէտը, զոր յստակօրէն չեշտած էինք, մինչ ա՛յդ իսկ էր բուն «ձախողութեան»: Եւ կը ճգնի կնճռոտել ու տարտղնել խնդիրը, ինչպէս ըսինք, վէճի առարկան փոխադրելով՝ եռամսեայ կանխավճարի գումարին որո՞ւն պատկանելու պարագային վրայ որ երկրորդական է, և դարձեալ Ս. Պատրիարք Հօր անունը առաջ կ'անցունէ: Ո՛չ միայն անպատշաճ, այլ և սուտ ու սխալ է այս, կը կրկնենք:

Ծիծաղելին հոն է որ, Լոյսի խմբագիրը հինցած truch մը կը դիմէ, դրամական գրաւի մեծադժոխք առաջարկներու, խոստանալով 15 ոսկի տալ մեզ, կամ մեր կողմէ մերժման պարագային, — որ բնական է, — Դաւթեան Որբանոցին, եթէ ապացուցանենք թէ Ս. Պատրիարքը չէ տուած խնդրի առարկայ եղած եռամսեայ գումարը: Ապացոյցը մէջտեղն է, պայմանագիրը կայ ու կը մնայ միշտ, որուն մէջ բացորոշապէս գրուած է թէ Բարգէն վրդ. ԻնՔ ՊԻՏԻ ՀԱՅԹԱՅԹԷ ամսական 5 ոսկին, և բնա՛ւ յիշատակութիւնը չիկայ Ս. Պատրիարք Հօր անուան, ինչպէս չէր կրնար անուիլ արդէն: Թո՛ղ

հրատարակէ պայմանագրին պատճէնը իր կրօնաթերթին մէջ, ինչպէս պահանջեցինք անցեալ անգամ ալ, և որմէ խոյս կուտայ, և ընթերցող հասարակութիւնը պիտի տեսնէ թէ որերնիս ճիշդ կըսենք, — վարդապետը թէ աշխարհականը:

Յետոյ, խնդիր է թէ Գալֆանի Որբանոցը տրամադիր պիտի ըլլայ ընդունելու Մուշի նախորդ առաջն. տեղապահին կողմէ տրուելիք գումար մը, — եթէ երբեք տայ: Բարգէն վրդ. լաւագոյն պիտի ընէր խոստանալով... Նպաստից Սնտուկին տալ 15 ոսկի. այս կերպով թէ՛ նիւթական հատուցում մը ըրած և թէ խղճի գոհացում մը գտած կ'ըլլար:

Գալով իր այն առաջարկին, որ մենք ալ խոստանանք 5 ոսկի տալ Գալֆանի Որբանոցին, — եթէ ըսածնիս չապացուցուի, — երկու բառ միայն պիտի գրենք անոր մասին, ըսելիքնիս յանձնելով ամէն ողջախոհ անձի դատողութեան.

— Վարդապետ, Մասիսի արդի խմբագիրը որ յառաջիկայ շաբաթ օր (31 Դեկտ. 1905) իր լրագրական ասպարէզը ընդգրկելուն քսանըմէկերորդ տարին պիտի լրացնէ, այդ երկար շրջանին մէջ միմիայն գրչի մարդ և մամուլի պարզ աշխատաւոր մը եղած է, միշտ գոհանալով համեստ վարձատրութեամբ մը կամ շահով մը, ու ինքզինքին չի կրնար ներել այդ տեսակ դրամական չափութիւնս. ներ: Բայց սա գոհունակութիւնը ունի, փոխադարձաբար, որ իր ձեռքին ու մտքին յոգնութեամբը կը ճարէ իր ապրուստը, և նպաստընկալ անտուկներու հետ հաշիւ չէ ունեցած, ո՛չ այ հետեւաբար արատ մը՝ իր ճակտին վրայ: Իր և իր պաշտօնակիցներուն նուիրածը՝ Գալֆանի Որբանոցին և ուրիշ բարենպաստակ հաստատութեանց՝ գրչի օժանդակութիւն մըն է, այսինքն բարոյական նպաստ մը, զոր Որբանոցն ալ, Հիւանդանոցն ալ գնահատած են միշտ: Դուք կրնաք տրամադրելի գումարներ ունենալ և գրաւներ առաջարկել յաջ և յահեակ. բարի՛ վայելում: Կը բաւէ՝ որքան որ ծիծաղելի դարձաք ձեր ձախորդ ինքնապաշտպանու-

թեամբը. մի՛ աւելի առաջ երթաք ձեր դայրոյթին ու շուարմանը մէջ՝ որ բողոքովին ridicule չըլլաք: Ու թողուցէք որ մենք մեր գրական աշխատութիւնը շարունակենք հանդարտ մտքով, առանց այլևս ձեզմով զբաղելու:

ԽՄԲԱԳՐ. «ՄԱՍԻՍ»Ի

Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

ՄԱՅ ՏԻԿԻՆ ԱԳԱՊԻ Մ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆԻ
ՔՈՅՐ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ. ՇՕՐ

Սարին ցաւով կ'արձանագրենք այն դառն կորուստը զոր ունեցան Օրմանեան և Տէր-Ներսէսեան ընտանիքները՝ յանձին Տիկին Ա. Գապի Տէր-Ներսէսեանի, քոյր Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Շօր և ամուսին Մհրան էֆ. Տէր-Ներսէսեանի: Ողբացեալ Տիկինը տակաւին երիտասարդ էր, հազիւ 44 տարեկան, և իր եռանդուն ու գործօն բնաւորութեանը կը միացնէր մարմնական առողջ երեւոյթ մը որոնք երբեք նախադաշնել չէին տար այսպիսի արագ ու աղետաւոր վախճան մը: Երկու շաբաթ առաջ վարակուեցաւ թոքատապէ, և հակառակ բժշկական ճարտար խնամքներու զորս անընդհատ նուիրեցին Տոքթ. Թորգոմեան ու Շէրպէթեան էֆ.ները, ինչպէս նաև իր եղբայրը՝ Տոքթ. Կ. Օրմանեան էֆ., անհրաժեշտ եղաւ կասեցնել անողորմ հիւանդութեան ընթացքն ու սաստիկութիւնը, և հէգ Տիկինը իր հոգին աւանդեց երեքշաբթիէն չորեքշաբթի լուսնալու գիշերը, չընկալաւ ընտանիքին անդամներէն որոնց գուրգուրաւից խնամքը արցունքի փոխուեցաւ:

Տիկին Ա. Գապի Տէր-Ներսէսեան կը թողու երեք ծաղկատի դաւակներ, Պօղոսիկ՝ 13 տարեկան ուշիմ ու աշխատասէր պատանին, և Արաքսի ու Սիրարփի՝ 10 և 9 տարեկան երկու սիրուն աղջիկներ որոնք բոլոր զիրենք ճանչցողներուն համակրութիւնը գրաւած են: Տանը զուարթութիւնն էին անոնք, և մտե-

րիմ այցելուները հաճոյքով կը տեսնէին այդ փոքրիկներուն ուսումնասէր ընթացքը, ի դարձին դպրոցէ, երբ փոխանակ խաղի ու զրօսանքի տալու ինքզինքնին՝ դասերով կը պարապէին, կանխահաս աշխատասիրութեամբ մը որ աւանդական յատկութիւնն է Օրմանեան ընտանիքին և որուն սքանչելի օրինակը կուտայ իրենց Ամեն. Ս. Մօրեղբայրը, որուն ներքին կեանքն ալ բովանդակ աշխատութիւն է: Իրենց ողբացեալ մայրն ևս ոչ նուազ կը նպաստէր իր զաւկներուն մտաւոր զարգացման, դաստիարակութիւնի դեր կատարելով տանը մէջ, կրթելով, մարզելով, խնայարարութեամբ զանոնք:

Տիկին Ագապի Տէր — Ներսէսեան, տիպոր մայր և ամուսին՝ իր ազնիւ ձիրքերով, իր հոգածութեամբը ընտանեկան յարկին բարեզարդութեան ու հանգստաւէտութեան, առտնին կեանքի մէջ նեցուկն էր իր Սրբազան Նղբօր որուն բովանդակ հոգն ու խնամքը իր վրայ կը ծանրանային: Ինքն էր տանը վարիչը, հիւրամեծարը, խնամածուն, և քաջարթուն ու արժանավայել կերպով կը կատարէր այս բոլոր կնոջական պատուաբեր աշխատութիւնները զորս պարտականութիւն մը կը համարէր ինքզինքին համար: Ուսեալ, լեզուագէտ ու բարեկիրթ՝ իր ընտանիքին պատիւ կը բերէր հայ և օտարազգի բարձրաստիճան այցելուներուն քով:

Անահնկալ ու դառնազէտ մահը, որ կը խլէ Տիկին Ագապի Տէր — Ներսէսեանը, իր ընտանիքէն ու սիրելիներէն, անդարմանելի կորուստով մը սուգի մէջ կը համակէ Օրմանեան ու Տէր Ներսէսեան ընտանիքները որոնց կը փութանք յայտնել մեր անկեղծ վշտակցութիւնները, մասնաւորապէս Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Միհրան էֆէնտիի որոնք խորապէս ընկճուած կը մնան այս ծանր հարուածին տակ: Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք նաև ողբացեալ Տիկին Նոջ դեռատի զաւկներուն, եղբօր՝ Տօքթ. Կ. Օրմանեան էֆ.ի և քոյրերուն՝ Տիկին Լիւսի Լէքէճեանի (ի Դահիրէ) և Օր. Էֆթիկ Օրմանեանի:

* * * Յաւալի դոյմը չօրեքարթի առաւօտ

տարածուելով ամէն կողմ, բարձրաստիճան եկեղեցականներ, Պատրիարքարանի ժողովականք ու պաշտօնէութիւն և բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւնք փութացին անձամբ երթալ Բերա, Ս. Պատրիարք Հօր բնակարանը, միսթարական այցելութիւն տալու Ն. Ամենապատուութեան ինչպէս նաև Միհրան էֆ.ի և ամբողջ ընտանիքին: Յաւակցական քարդեր ու հեռագիրներ ևս կը հասնին հետզհետէ:

* * * Յուդարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ այս առաւօտ, ուրբաթ, Բերայի Ս. Ներորդութիւն եկեղեցին, մասնակցութեամբ եպիսկոպոսական դասուն, և բազմաթիւ վարդապետներու ու քահանաներու: Հայ և օտարազգի յուդարկաւորներու ընտրեալ բազմութիւն մը որոնց մէջ կ'ընդմարուին պետական պաշտօնատարներ ու ծանօթ անձնաւորութիւններ, և խուռն ժողովուրդ, լեցուցած է տաճարը, արժանաւոր յարգանք մը ընծայելով թէ ողբացեալ Տիկին Նոջ յիշատակին և թէ անոր Ամեն. Ս. Նղբօրը, վշտահար ամուսնոյն և բոլոր պարագաներուն:

* * * Հայ-Հռոմէականաց Կ. — Պատրիարքը՝ որ Հռոմ մեկնելէ առաջ՝ Հաճեան Գերապայածառը ցաւակցական այցելութեան ղրկած էր Ս. Պատրիարք Հօր բնակարանը, յուդարկաւորութեան ևս իր կողմէ իրեներկայացուցիչ կարգած էր երկու վարդապետներ: Նոյնպէս Յունաց Ս. Պատրիարքին կողմէ հոգեւոր ներկայացուցիչներ, Բողոքականաց Ագապետ էֆ.ն, բարձրաստիճան օտարազգիներ ներկայ գտնուեցան յուդարկաւորութեան որուն կը նախագահէր Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս: Դամբանականը խօսեցաւ Տ. Գէորգ եպիսկ. Նրէցեան:

* * * Ներքին գործոց նախարարութեան պաշտօնատարներէն Նրուանդ էֆ. Նուսուֆեան՝ ի դիմաց Տպագրական Տեսուչ Վսեմ. Բէմալ պէյի այցելեց Ս. Պատրիարք Հօր և Ն. Վսեմութեան ցաւակցութիւններն յայտնեց:

ԱՆԳԼԻԱՅԻՆ ՈՒՒՐ ՏՈՒՆԸ (*)

«Երջանկութիւնը, կ'ըսէ Պըրնս, որոշեալ տեղ մը չէ, եթէ ունիք հաստատ կամք. հոս է, ամենուրեք է ան:» Այսարհի մէջ՝ ուր ամէն բան անհաստատ, է մարդ կը կարօտի յենարանի մը, կռուանի մը, վայրի մը վերջապէս՝ ուր կարե՛նայ ստեղծել երջանկութեան միջնորդող մը: Տունը, կեանքի անպատին ովասիսը, ա՛ն միայն կրնայ ըլլալ երջանկութեան կենսաբաշխ վառարանը, տաքուկ ու ապահով: Վա՛յ անոր որ հասարակաց վայրերու մէջ կը փնտռէ իր երջանկութիւնն ու հանգիստը, եւ չհա՛նու ու կեղծիքի հիմերուն վրայ կառուցուած օղակէտ չէնքերու տակ կը կարծէ գտած ըլլալ երանութիւնը: Երջանիկ ըլլալու համար կեանքի անապատին մէջ կենսատու ովասիս մը ստեղծելու է. մութ տարածութեան մէջ լուսափայլ կէտ մը, ընտանեկան բոյնը, տունը միայն կրնայ ըլլալ: Բնութեան մօտն ու Յուստինիանիսի ձայնը հոն կը ցուցնէ երազուած հանգիստն եւ որ տեւական է մինչեւ շիրմին եզրը:

Անգլիացին կ'ըսէ. — «My home is my happiest place in this world.» (Տունս այսարհի մէջ ամէնէն երջանկացուցիչ է) եւ իրաւամբ, ինք հոն կը գտնէ ամէն բան. անկէ դուրս՝ անհրապօր ու ձանձրացուցիչ է իրեն համար: Անգլիացի աղնուականէն մինչեւ անշուք ու օրապահիլը ճարող գործաւորն իր խորն ունի, ուր կը քաշուի գիշերներն իր վաստակաբեկ մարմինն ու հէք գլուխն հանգչեցնելու, ուր կը գտնէ երջանկութեան անհուն միջնորդող մը, ժպիտ ու զուարթութիւն: Հոն կը սպասեն իրենք քաջաբերանք և յոյս, ու երբ ան յոգնած, պատրուած՝ տուն կուգայ նոյն իսկ երեմի ձեռնունայն, տրտունջի բառ մը իսկ իր ա-

(*) Բիւզանդիոնէն կ'արտասպենք ընտանեկան երջանկութիւնը պատկերացնող այս գեղեցիկ յօդուածը, որուն երիտասարդ հեղինակը կ'աշխատակցի նաեւ Մասիսին գաղտրիկ բանաստեղծութիւններով:

կանջին չի հասնիր, այլ միշտ գոհունակ շրթներ իրեն մեղմօրէն կը մըմնջեն «Better luck to morrow dear!» (Բախտդ աւելի յաջողի վաղը, սիրելի): Այդ մարդն հետեւեալ օրն իր կուրծքն աւելի արիօրէն կը բանայ բախտի հարուածներուն, կը պայքարի, ու իր աննկուն կամքին առջեւ կը խոնարհեցնէ բախտի դժնէ ճակատը: Չէ՞ որ Անգլիացիին նշանաբանն է Էդած յաճախ «ո՛ւր որ կամք կայ՝ հոն միջոց կայ»:

Տունը եղած է միշտ Անգլիոյ բարգաւաճման մեծ օժանդակը, բարոյական կեանքին արդանդը: Երջանիկ տուները սակայն ինքնիւրեննուն չէ որ կը կազմուին կամ երկրնքէն շնորհուած, միակ Անգլիացիներուն: Ծոյլ, անհոգ արարածներու չէ որ կը շնորհուին անոնք: Ուր որ յարատեւութիւնն ու կամքը կը պակսի, հոն, տունը կը կորսնցնէ իր հրապոյրը: Տունը պէտք է ըլլայ վայր մը ուր մարդը կատարեալպէս անջատուած կը զգայ ինքզինքն աշխարհէն, անոր աղմուկէն ու հոգեբէն: Այդ անուշ օթեւանը պէտք է մօտցնել տայ մարդուն՝ օրուան տաժանքն ու տառապանքը: Սրտապնդումի վայրը պէտք է ըլլայ տունը, ուր առուգանան մարդուն հոգին ու մարմինը, եւ վաղորդայնին մէջ կարենայ ան դիմագրաւել ամէն դժուարութեան, որպէս զի երեկոյին չարամիս իր բոյնին գոհունակ դէմքերը, չխամբին թաւիչ այտերը, ու չգոցուին սուտակեայ շրթները: Մեր տուններէն քանի քանիներն այսօր նախանձելի վիճակ մը պիտի ունենային եթէ անոնցմէ ոմանց մէջ համաձայնութեան, ոմանց ալ յարատեւութեան ոգին չպակսէր: Սէր, խաղաղութիւն, ներողամտութիւն ու հաւատք, ահա հիմունքն իտե՛ալ բոյնին: Անգլիացի այր ու կին շատ տեղ երջանիկ են, ու բնաւ ձանձրոյթի դժնիկ որդը չի մտներ իրենց սրտին ներսը. որովհետեւ ամուսիններ ըլլալէ առաջ իրարու մտերիմներ եղած էին, սիրելէ առաջ զիրար յարգած էին: Չէ՞ մի որ յարգանքը սիրոյ աղբիւրն է: Երկու կողմէ ի գործ դրուած այս յարգանքը ներողամտութեամբ անտեսել կուտայ փոքրիկ պակասութեանց, դորս կարելի է գործեն այր ու կին:

Ինչ մը կրօնամուլ է Անգլիացիներն, ու իր բոյնին մէջ կրօնքին եւ հաւատքին մեծ տեղ մը տրուած է, որք մեծագոյն մխիթարանքներն են կեանքի դառնութեանց մէջ: Հաւատքը երջանկութեան առանցքն է ու բարոյական ուժերու զօրավիգը: Ու Անգլիացիներուն հաւատքն իրենց պէս պարզ է, երկնաբուրգի ճառագայթի մը պէս յստակ, անբիծ ու լուսածիր: Արհամարհոտ ու հեղնական արամադրութիւններ չեն անուցաներ հաւատքի մասին: Պէտք է հրահրել այդ սրբազան զգացումը, շունչ տալու համար հաւատքին, առանց որուն ապրիլը դժուարին ու մահն արհաւիրելի կը դառնայ: Ընտանեկան յարկին պարգեւած երջանկութիւնը, անոր ունեցած դերն ամօլներու եւ դաւակներու վրայ, ինչպէս նաեւ հաւատքի զգացման եւ կրօնական կեանքին ազդեցութիւնը լաւագոյն կերպով պատկերացնելու համար կը ներկայացնեմ պատկեր մը անգլիական կանգնած առնուած, որուն ականատես եղած եմ եւ անոր խաղաղ մթնոլորտին մէջ ապրած: Այդ պատկերն իր տեսակին մէջ միակը չէ, այլ կեանքին նկարագրութիւնն է գրէթէ ամէն անգլիացի ընտանիքի հաւատարմութեամբ, անգլիական ամէն ընտանեկան յարկի: Պզտիկները ձեռքերին կը կցեն ծունր դնելով. մայրիկն երգեհոնին առջեւ նստած է ու հայրն ալ ոտքի. մէկիկ մէկիկ կը համբուրէ այդ խարտեալ գլուխներն որք իր շուրջը կը բոլորուին, բոյնին վարդափառ թռչնիկներն որք այդ սիրաբոյր մթնոլորտին մէջ կ'աճին: Լոռութիւնը կը տիրէ, ու ներկաներն անկիւն մը քաշուած լուռ կը մնան, չխնայաբերելու համար այդ գերագոյն խանդավառութիւնը: Երգեհոնն է որ կը սկսի հնչել, մերթ կը գոռայ ան ու կ'աղմկէ, մերթ կը նուաղի աւաչի մը պէս, կը սպառի, կ'անշջանայ: Ու ձայներու անուշ ներդաշնակութիւն մը կ'ընկերանայ երաժշտութեան:

Երգեհոնահարին հաւատքն ուժգին կ'աղդէ պզտիկներուն վրայ, որք կը մրմնջեն, կ'աղօթեն խօսելով կարծես երկնից, իրենց հրեշտակ քուրիկներուն հետ: Դուրսն հովը

կը սուլէ ոռնումով: Բնութեան տարերքները կը սարսեմ տունը հիմէն, սակայն ան, անքոյթ ու հաստատ ժայռի մը պէս ուժով ցած հաւատքով լեցուն կը կանգնի, ճակատելով Բնութեան արհաւիրքներուն դէմ, ամրապինդ կռուանն անբիծ հոգիներու: Օրհնա՛լ ըլլան այդ երկնաբոյր սուրբ մթնոլորտը ստեղծող հոգիք:

Անգլիացիներ կը սիրէ իր fireside-ն, օջախը որուն համար հոգի կուտայ: Ինչ դոհունակ ժպիտ մը կը թառի անոր շրթունքներուն ու դէմքին վրայ երբ իրիկունը վերադարձած գործէ, իր օրական պարտականութիւններն անթերի կատարած ըլլալու ճշմարիտ գիտակցութեամբ կը բազմի իր հին բազկաթոռին մէջ որուն համար յաճախ լսած եմ շատերուն գուրգուրանքով դռնը. — My good old arm chair: Օջախին մէջ փայտը ճարճատիւնով կը վառի՝ կարմիր բոցավառ լոյս մը տարածելով, յորդելով դուրս: Որքան հեշտին է մութին մէջ նստած դիտել այդ շատ աղուոր բոցավառումը: Յաճախ տեսներնրը մեծ թէ պզտիկ, իրարու քով կը բոլորուէին այդ օջախին դէմ ու այդ լոյսին տակ հանգիստ, անդադրում կը խօսակցին մերթ ընդ մերթ ընդմիջուելով դեռափթիթ էակներու հարցումներէն: Այդ խօսակցութիւնները կը կազմեն ընդհանրապէս միջադէպեր, օրուան տնական մանրամասնութիւններ, պարապ վայրկեաններու կարգացումը գրական գործի մը վրայ կազմուած տպաւորութիւններ ու կարծիքներ, քիչ մը քննադատութիւն: Յանկարծ այդ ասուլիսը կ'ընդմիջուի սրահին խորէն, կէս-մթութեան ծոցէն, հեւքի պէս թռթռուն երաժշտութեան մը ձայնէն: Աղուոր անակնկալ: Դեռատի աղջիկ մըն է, որուն ծնօտին տակ ջութակի մը ողորկ մարմինը կը հանգչի, թեքը դանդաղօրէն ու մեղմութեամբ կը շարժին, ջութակին թեւերէն հոսող անուշ ձայները, ներդաշնակ կը փոխադրեն այդ սիրատարի էակներն երազի ու հատնումի քաղցր օրերու որոնց վերջուշունի ատեն երկու երկու, ձեռքերը զիրար կը գտնեն դողդաղաբան սեղմումի մը մէջ:

արցունքի տաքուկ կաթիլներ մութին մէջ
այտերէն վար կը սահին՝ յուշիկ յուշիկ. եր-
ջանիկ են. ամենքը, ամենքը ... Ո՛չ մէկ
բան մարդուն երջանկութիւնը կը կրկնա-
պատկէ՝ որքան իրեններուն երջանկութեան
ակնատես ըլլալը։ Արդար հպարտութիւն
մը կը զգայ ան երբ կը խորհի թէ այդ եր-
ջանկութեան աղբիւրն ինք իսկ է հղած։
Կեանքի մէջ չկայ ապերջանկութիւն մը որ
կարենայ հաւասարիլ տան մէջ գտնուած ա-
պերջանկութեան։ Համբաւի, հարստութեան
կորուստն ոչինչ կը պակսեցնեն տան երջան-
կութենէն, երբ հոն սէրը հաւատարիմ կը
մնայ իր կոչման։ Այսպէս, բարոյական ու
մարմնական զօրաւոր մտքով ու արտով լե-
ցուն, գործնական ու ձեռներէց ոգիի տէր
ու տաք հոգիներով սերունդ մը Տո՛ւնը
միայն կրնայ հասցնել։ Տունն է որ կուտայ
ուղղութիւնը սերունդին, հոն կը սկսի կա-
ղապարուիլ տղուն նկարագիրը։

Եւ սակայն անգլիական այս Հօմի դրու-
թիւնը տուն կազմելու, գլուխը երգիքի մը
տակ պատսպարելու, իր կեանքն ընկերոջ մը
հետ բաժնելու գաղափարը կը պակսի մեր
մէջ ոմանց, որուն երեսէն կը տուժենք։
Կ'արժէ՝ գիտնալ ուրեմն թէ ի՞նչ բան է որ
մեզ հեռու կը պահէ այդ գաղափարէն։
Անգլիացիին ըմբռնումը տան ու կեանքի
ընկերոջ մը մասին՝ շատ ու շատ տարբեր է
մերինէն։ Անգլիացին կ'ամուսնանայ իրեն
ընկեր մը ունենալու, մտերիմ մը, խորհրդա-
տու մը ունենալու համար, մինչ մենէ շա-
տերը կ'ամուսնանան՝ յառաջացած տարիք-
ներու մէջ սոսկ նեցուկ մը ունենալու հա-
մար որ խնամէ զիրենք, կերակուր եփէ ու
պէտքէնին հոգայ, կամ դրամ բերէ իրենց։
Ա՛յս է միայն կնոջ դերը, ա՛յսչափ միայն։
Տան կեանքը դժբախտաբար մեր մէջ ոմանց
համար գրէթէ գոյութիւն չունի։ Կատար-
ուած ամուսնութիւնները քիչ բացառու-
թեամբ քաջալերութիւն չեն ներշնչել ա-
մուրիներուն։ Ամէն կողմ բնաւորութեան ու
նկարագրի անյարմարութիւն, աններդաշնակ
կեանք մը, ու այս ամէնը անոր համար՝ ո-
րովհետեւ ամուսնին արտաքին ձեւերէ խաբ-
ուած են, որովհետեւ զիրար չեն կրցած
հասկնալ։ Կատակերգութիւն մըն է այս,

բայց ողբերգական կատակերգութիւն մը,
ծիծաղաշարժ՝ եթէ ոչ վշտառիթ։

Առաջին սկզբունքը զոր պէտք է ներ-
շնչել մեր երիտասարդներուն՝ սա՛ է թէ տուն
մը կազմելը ոչ մէկ ատեն պատուհաս մըն է
երիտասարդին, ի՞նչ դասակարգի ալ որ
պատկանի ան, պայմանաւ որ կարենայ իր
առած քայլին մէջ գիտակցութիւն մը դնել,
կշռուած ու խոհական դատաստանով մը
կատարել իր ընտրութիւնը, ապահովուած
թէ՛ ապագային զղջումի ու արտունջի պատ-
ճառներ չպիտի ունենայ ու է կերպով։ Այս
սկզբունքով կատարուած կեանքի միացում-
ներ՝ չեն կրնար զղջացնել ենթական ու ա-
նոր տարաբախտ ճակատագիր մը ստեղծել,
այլ ընդհակառակն անոնք չեն ուշանար բա-
րեբար աղբեցութիւնով մը պսակուելու։

ՀՐԱՆՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԳԱՀԻՐԷ՛՛՛ կը գրեն թէ Վսեմ. Պօղոս
փաշա Նուպար իր անձնականէն հոգացեր է
նոր շինուելիք վարժարանին համար հան-
գանակուած գումարէն պակսած դրամը։
Իեկտ. 6)19ին նիստ գումարեր է եգիպտոսի
Հայոց Գաւառ. Ժողովը, եւ զբաղեր է
վարժարանին խնդրով։ Պօղոս փաշա կար-
դացեր է Ժողովին ուղղած իր գիրը որով
կը հաստատէր նուիրատուութեան խոստու-
մը։ Իր հիմնելիք առեւտրական վարժարա-
նին համար յատկացուցած 40,000 ոսկիէն
մնացած գումարով յանուն աղգին վագֆ
կալուածներ պիտի գնէ որոնց հասոյթն ընդ
հսկողութեամբ Նուպարեան գերդաստանի
ներկայացուցիչներուն, պիտի գործածուի
Հայ ուսանողներու՝ բարձրագոյն ուսմանց և
մասնագիտութեանց հետեւելու ծախքերուն։
Պօղոս փաշա երբ աւարտեր է իր այս գրու-
թեան ընթերցումը, Ժողովն յոանկայս շնոր-
հակալութեան քուէ առաջարկեր է։ Ժողո-
վոյ ատենադպիրը յանուն իր պաշտօնակից-
ներուն շնորհակալութեան ուղերձ մը կար-
դացեր է։ Նոյնպէս Ժողովն ընդունել է քա-
հանայ անդամի մը առաջարկը, թէ ամէն
տարի Գալուստեան վարժարանի հիմնարկէքի
տարեդարձի օրը, հանգստի պաշտօն կա-
տարուի Նուպարեան գերդաստանի ննջեցե-
լոց հոգւոյն ի յիշատակ։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Միացեալ Նահանգաց Օրէկօն Նահանգին Պէյքըր Սիթի քաղաքին մէջ ձեռնարկութիւն մը եղաւ 150,000 սղէրլին հաւաքելով նուիրելու Օր. Ալիս Ռուզվէլթի, անոր ամուսնութեանը առթիւ Մր. Նիքօլաս Լոնկուորթի հետ, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ փետրվարին: Մր. Լոնկուորթ որ անդամ է Երեսփ. Ժողովին, Սպիտակ Տան մէջ (նախագահական պալատը) ընդունուած է արդէն իբրեւ ընտանեկան անդամ մը: Կ'առաջարկուի որ հանգանակութեան ցուցակ մը բացուի իւրաքանչիւր նահանգի մէջ եւ ամէն անհատ մասնակցի 10 սէնդի նուիրատուութեամբ, գոյանալիք գումարը հարսին նուիրուելու համար: Մր. Լոնկուորթ շատ հարուստ երիտասարդ մըն է արդէն և Օր. Ռուզվէլթ եւս, Միացեալ Նահանգաց նախագահին աղջիկը, ժառանգութիւն մը ստացած ըլլալով, ինք եւս նուազ հարստութիւն չունի: Եւ սակայն նուէրները կը պատրաստուին մեծաքումար:

* * Անցեալ շաբթու յուզիչ դէպք մը պատահեցաւ Պոտսդէյքի թատրոնին մէջ, երբ Ժոսֆ Օնէի «Դարբնոցապետը» կը ներկայացուէր: Առաջին արարուածին ներկայացումէն վերջ, այն պահուն ուր Քլէո տը Պօլիէօ մոլեգնօրէն ցաւ կը յայտնէր թէ չի կրնար ինքզինքը դուքսին նուիրել, հրադէնի հարուած մը լսուեցաւ հանդիսատեսներու կողմէն: Մեծ իրարանցում մը առաջ եկաւ ունկնդիրներուն մէջ եւ ներկայացումը ընդհատուեցաւ: Երբ ծուխը փարատեցաւ, հանդիսականները տեսան որ մարդ մը դուրս կը հանուի, որուն գլուխէն արիւն կը հոսէր: Բժիշկները քննեցին վէրքը եւ վտանգաւոր գտան: Մարդը կրցաւ խօսիլ եւ ըսաւ թէ ինք խանութպան մըն է և շաբաթներէ ի վեր կը խորհէր անձնասպան ըլլալ, որովհետեւ աղջիկ մը կը սիրէր և իր սէրը չէր փոխարինուեր: Բեմին վրայ, Բլէնի ողբուկով կատուեցուց զինքը, և բէվովէր գլխուն ուղղեց, իր թշուառ կեանքին վերջ տալու համար:

Տարաբախտ սիրահարը հիւանդանոց տարուեցաւ և հոն աւանդեց հոգին: Դէպքին ատեն շատ մը կիներ մարեցան և բաւական ժամանակ անցաւ, մինչև որ ներկայացումը վերսկսաւ:

* * Ըարոնի հիւսիսային մասերուն մէջ ծագած սովը անուշիկ համեմատութիւններ կըստանայ: Թօքիոյէ կը հեռագրեն թէ վերջերս օտարականներէ մասնախումբ մը կադմուեցաւ, սովահար գաւառներուն նպաստ հասցնելու համար: Մասնախումբին հրատարակած տեղեկագրէն կը հասկցուի թէ Ճարոնի երեք հիւսիսային նահանգները, որոնք 2 միլիոն 321,357 բնակիչ ունին, սոսկալի ռովի մը մատնուած են, որուն նմանը տեսնուած չէ այն կողմերը 60 տարիէ ի վեր:

Միայն Միյաճի նահանգին մէջ 250 հազար հոգի մէկ օրէն միւսը մեռնելու վտանգին մէջ են: Ֆուքույի մայի մէջ 300,000 հոգի բացարձակ չքաւորութեան մատնուած են, Իվաթէի մէջ ալ 100,000 հոգի սովահան պիտի ըլլան, եթէ չուտով օգնութիւն չհասցուի:

Տեղեկագիրը կ'եզրակացնէ թէ սովահար ժողովուրդէն 680,000 հոգի յուսահատական վիճակի մէջ են: Բոլոր օտար թերթերը հանգանակութիւն կը կատարեն Նթէ արդիւնաւոր միջոցներ ձեռք չառնուին, սովը աւելի շատ մահ պիտի պատճառէ քան վերջին պատերազմը:

* * Ամանորը մեծ խանդավառութեամբ տօնուեցաւ Եւրոպայի մէջ: Կիրակի գիշեր Պերլինի բոլոր փողոցները լեցուած էին խիտ բաղմութեամբ, որ «Սիլվէսդըր նախթ»ը տօնելու կը պատրաստէր: Ամբողջ տասը օրէ ի վեր, Պերլինի երկու մեծ պողոտաներու գլխաւոր սրճարաններուն և ճաշարաններուն գրեթէ բոլոր նստարանները և աթոռները բռնուած էին: Կէս գիշերին, այդ հաստատութիւնները լեցուեցան կէս-գինով բաղմութեամբ մը, որ ժամը 12ին կը սպասէր, աղմկալից շնորհաւորութիւններու պոռթկում մը սկսելու համար: Փողոցներուն մէջ տիրող ոգեւորութիւնը աննկարագրելի էր:

* * Նախանձու ոճիրի մը լուրը կուգայ Պէր-
լինէն: Գերման հանգստեան կոչուած սպայ
մը, Ալֆրէտ Հէրձկէր, բէվոլվէրի վեց հար-
ուածներ պարպելով իր կնոջ վրայ, սպաննեց
զայն, եւ յետոյ անձնասպան եղաւ զնրակ
մըն ալ պարպելով իր կուրծքին: Հէրձկէր
շատ աղքատ ինկած էր, եւ բախտ փնտռե-
լու համար մինչեւ ճաւա եւ Պաթաւիա գա-
ցած: Դուրսը գտնուած միջոցին բարեկամի
մը պաշտօն յանձնած էր հսկել իր կնոջ վրայ
որ հրաշալի գեղեցկութեան տէր էր: Արդ,
Հէրձկէր ապահովաբար շատ աննպաստ լու-
րեր առած էր Պէրլինէն, որ օրին մէկն յան-
կարծ իր երկիրը դարձաւ առանց նախապէս
իմաց տալու, եւ ճիշդ Ծնունդի իրիկունը իր
կնոջ առջեւ երեւցաւ, երբ ան նստած էր
Ծնունդի ծառին առջեւ: Մէկ ձեռքը ճամ-
բորդութեան խարազան մը եւ միւսն ալ բէ-
վոլվէր մը բռնած, «Եկայ որ, ըսաւ, երե-
սիդ զարնեմ թէ ո՛ր աստիճան վառին մէկն
ես:» Այս ըսելով, խեղճ կնոջ կուրծքին բէ-
վոլվէրի վեց հարուած պարպեց, եւ յետոյ
հրազէնը ինքզինքին դէմ դարձնելով՝ անձ-
նասպան եղաւ: Ոստիկանական քննութիւնն
հաստատած է թէ Հէրձկէր հասարակածային
երկիրներու յատուկ մտադարութենէ քանու-
ած եւ մորֆինամով մը եղած էր:

* * Միլանի «Սքալա» թատրոնը, որ ի-
տալիոյ ամէնէն կարեւոր թատրոնն է, անց-
եալ չորեքշաբթիէն ի վեր հարկադրուեցաւ
դադրեցնել իր ներկայացումները: Ասոր
պատճառն է նոյն թատրոնի նուագախում-
բին պետ հռչակաւոր Մաէսդրօ Բամբանինիի
յանկարծական փախուստը: Հռչակաւոր երա-
ժշտապետը իր նուագաւորներուն անկար-
գապահութենէն դժգոհ, Միլանէն Բարմա
գացեր եւ հոնկէ իր հրաժարականը զրկեր է
թատրոնին Տնօրէնութեան: Այս վերջինը կը
ծանուցանէ սակայն թէ փնայսուց հատուցում
պիտի պահանջէ Պ. Բամբանինիէն, իր յան-
կարծական մեկնումին համար:

* * Ամերիկացիներն Հռոմի մէջ եւս պի-
տի հիմնեն Դեղարուեռտից Ակադեմիա մը,
ինչպէս հիմնած են Բարիզի մէջ: Այս նոր
Ակադեմիան պիտի բացուի 2-3 ամիսէն:

Այս նպատակով Ամերիկացի միլիտանտե-
ներն եւ համալսարանները մէկ միլիառ տո-
լարի նուիրատուութիւն մը ըրեր են:

* * Անցեալ շաբթու գիշեր մը գողեր
մտեր են Ֆիրէնցայի մէջ Տանդէի տունը, որ
իրբեւ մուսէոն կը գործածուի, եւ մեծ բա-
նաստեղծին նշխարները կը պարունակէ:
Դողցուած առարկաներուն մէջ կը գտնուին
թանկագին նկար մը, շքադրամներ եւ զար-
դեղէններ, արծաթէ անօթ մը, եւ Տանդէի
մէկ պատկերը: Գողերը տունէն մեկնելէ ա-
ռաջ թշնամալից արձանագրութիւն մը գրեր
են պատին վրայ, ըսելով թէ Ֆիրէնցայի
ժողովուրդն անկարող է պահպանելու անց-
եալին թանկագին նշխարները:

Կ Ա Ղ Ա Ն Դ Ի Ա Ռ Թ Ի Ի

Տարուան այս վերջի շաբթուն մէջ, ուր
նուէրներու պատրաստութեամբ կը զբաղի
քիչ-շատ կարողութեան տէր ամէն մարդ,
անմրցելի առաւելութիւններ ու դիւրու-
թիւններ կ'ընծայէ Հէրձկէրի վաճառատունը
(Պոլիս, Մեծ-Շուկայ) ուրկից կարելի է կա-
տարել ո՛չ միայն գոհարեղէններու, ժամա-
ցոյցներու, ոսկեղէն ու արծաթեղէն զար-
դերու գնումներ, ամսական վճարումով, այլ
նաեւ պատրաստ հանդերձեղէններ, ֆանթե-
զիներ, թօհաֆիէներ եւայլն: Արդէն այդ
ծանօթ վաճառատան Ծանուցման մէջ ման-
րամանօրէն յիշուած են վաճառուած ա-
ռարկաներն ու գնման պայմանները, եւ կա-
ղանդի մօտաւորութեան առթիւ Շուկայ ել-
լող այրերուն ու տիկիներուն համար հա-
ճելի առիթ մը պիտի ըլլայ անգամ մը այ-
ցելել Հէրձկէրի վաճառատունը ուրկից մե-
ծապէս գոհ պիտի մնան:

ՏԱՐԵԳԼԻԻ մօտաւորութեան առթիւ,
անգամ մըն ալ կը խնդրենք մեր գաւառա-
յին գործակալներէն ու բաժանորդներէն որ
Մաթիսի խմբագրութեան հետ իրենց ունե-
ցած բաժանորդագրական հաշիւը կարգադ-
րեն՝ մեր պահանջներուն առաքումովը:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻԾԵԱՆ

Տէր եւ Տնօրէն—ՏՈՔԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի



2-10

6-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ժ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	դր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ժ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց դուժարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոյց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնք կենթարկուին միշտ ափսոսանքի, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՄՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Գաքքըն օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Ինայէթ Սան: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

10—10

ՓԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԵՏՈՒԱԿԱՆ, ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՆԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային աւերածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւորն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօն

Ը ՆԳՈՒ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքսան Խան,

8—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ,”



ՀԻՄՆԵՍԱԼ Ի ԼՈՆԵՏՈՆ 1782 ԻՆ
ՅԸ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԷՆ Ի ՎԵՐ
ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագրուիս եւ պահեստի դրամ

• ԱՆԳԼ. ոսկի 4,218,000

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ իր անմիջական վնասումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ մէն առաւել տնտեսական շարժումն ուսուցանածք, յոյժ նպատակաւ պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է
ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ 3,000,000 անգլ.
բաժ է առաւել քան 27,000,000 անգլ.
ապի:

Ընդհ. գործողութիւն Պաշտի եւ Գաւառ
ապի: Դ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Վերալիս խան, Պանք Օթոմանի Վո
Ղալաթիա:

Փոխ գործողութիւն Պաշտի
ՌՈՒԻՐ. ԱՅԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԵԲԵՍՆ
Էմրն պիլ խան Ֆնսլիան խան
Զանիլ թագաւոր

6—10

Ա. ԷՆՔՍԻՐՃԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ, ՄԵՐ ԳՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալան-Սէրայի Լիսէին դ'մ
Դե. Նե. Շը. օրերը առաւօտեան կանու.

խան մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

Բե. Դե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամագրութեամբ 5 12

ՅՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԸՆ

Ռնի կեանքի, օմիսի, արկածի, ցման թուակի հիւղեր
VICTORIA ՎԻՔՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ Կեանքի ապահովագրութիւններ ունի թի'
DE Բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վնասումները շարժական մասնավնասումներով աեղի կուենան,
սկսեալ 5 դրուչէն

Ապահովագրեալ գումար 1904ին Յր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին . » 605,718,000

Հաստատւած 1853 սեպտ. 20ին ար-
քայականիրովարակով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քեւ:

ԸՆԿ. ԴՐԱՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օպմ. Կայս. Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻՋԷՆԱ

Կալաթա, Պերեքիս խան

Օրիանդ-Պանքի դեմ

CAISSE PATERNELLE

ԲԷՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵՍՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵՍԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԵ ԶՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

ԱԿԻՐԵԼՆ Ի ՎԵՐ ԱՊԱՆՈՎԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԵՂԱԾ ՎՆԱՐՈՒՄ 300 միլիոն ֆր.
 ԱԿԻՐԵԼՆ Ի ՎԵՐ ԱՐՃԱՆԱԳՐԵԱԼ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒՄԻՆԴ 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶՐ. 85,000,000
 ԴՐԱՄԱԴՆՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն քննարկի ապահովագրության ցուցանիշները վրայ պահեստի համեմատությամբ 74%, որով ԲԷՍ ԲԱԳԵՐՆԵԼԻ ընծայած երաշխավորությունը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերությունց ցուց ցուցած երաշխավորությունէն:

Ընկերությունն վարչական կորնուրդը կազմուած է Ծրանաւոր ամէնէն նշանաւոր Դրամաւորներէն, ինչպէս

Մ. ՌԸՆԵ ՊՐԻՍ, Արեւմտեան Ծրանաւոր երկաթուղեայ ընկերութեան եւ Քրէտի Լիոնէի վարչական կորնուրդ, անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՐ, Դաւանադարանի ընկերութեան վարչական կորնուրդ, անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԵՆ ԿԻԼԵՄ, նախկին դաւանաւոր.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թաւրջի, Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱՄԱՍՏՈՐ
 Պալիս, Սուրբան-Համամ, Բաւաթ Քաթրոնըզու

Ընկերութեան վրայ անդնկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՈԹ. — Ծանաւոր դիւր պիտի տեսնուի այն ֆնիքի որ կաշեւոր աղիւնք մը իր
 ազորձած քլլիլ անձնապէս: 8—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՄԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Այժմ անտակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնաւորապէս եւ երկար տարիներէ ի վեր կը դառնան աստմոքսի, աղիւնք, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տնայնութիւնները, հիմն եւ նոր զաղիական ախտները: Այս վնասի ախտները, ուստի աստմոքսի խանգարման եւ նորազոյժ մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը 2 քաւքարթի օրերը միայն ձրի: 8—10

ԴԵՐՁԱԿ

ՎԻՉԵՆ ԱԼԱՃԱԵԱՆ

Ղալաքիա, Հաւանքը փողոց, քիւ 13

Լուս անտակ հեղաշինքով ու լճեւաւոր հագուած ապարտաւել տալ ուղղունք. քաւքարթ միանգամայն օժանդակիւն կը փնտրուի եւ վնասման դիւրքի պայմաններ, կորնան դիմել այս նոր բուժումը խանգար, եւ մեծապէս զգի պիտի մնան: 2—10